



ք. Երևան

12.11.2012

ԿԱՐՄԻՔ

«Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյանի դեմ Լեռնապատ գյուղի գյուղապետ Վանո Եղիազարյանի հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍՄԱՆՔՆԵՐԸ

Լոռու մարզի Լեռնապատ գյուղի գյուղապետ Վանո Եղիազարյանը դիմել է դատարան ընդդեմ «Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյանի՝ 2011 թվականի օգոստոսի 23-ին վերջինիս կողմից թերթում հրատարակված «Գյուղապետի հասցեին արված «արածել» բառն արժե 1 միլիոն» վերնագրով հոդված համար: Սույն հոդվածով լրագրողը մեկնաբանել էր Վանո Եղիազարյանի կողմից իր համագյուղացու դեմ ներկայացված հայցի հիման վրա հարուցված մեկ այլ դատական գործ:¹ Վիճահարույց հոդվածից մեջբերում ենք հետևյալ հատվածը.

«Լոռու մարզի Լեռնապատ գյուղի բնակիչ Գևորգ Մելքոնյանը «Ժամանակ» օրաթերթի «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով հոդվածում հետևյալ տեղեկություններն է հրապարակել գյուղապետ Վանո Եղիազարյանի գործունեության վերաբերյալ... Մեջբերված ամբողջ տեքստից գյուղապետը գրապարտություն է համարել այն, որ ինքը բազալտի ապօրինի հանք է դրել, և որ Սամվել Հարությունյանից մեծ գումարներ է վերցրել: Արտահայտություններից մեկն էլ՝ «Մենք ուզում ենք իմանալ՝ ընդեղ արածողը Սամվել չն ա լինելու, գյուղապետ՝ թե՞ ավագանին», գյուղապետ Վ. Եղիազարյանը որակել է վիրավորական՝ չնայած ինքը՝ գյուղապետը, նշված արտահայտությունը

¹ ԼԴ/0748/02/10 քաղաքացիական գործով ընդդեմ իր համագյուղացի Գևորգ Մելքոնյանի հարուցված դատական գործը՝ վերջինիս կողմի «Ժամանակ» օրաթերթում հրատարակված «Էս թուրքին մեր միջից հանեք» վերնագրով հոդվածում հնչեցրած հայտարարությունների հիմքով: Այս դատական գործով 08/07/2011թ.-ին կայացվել էր վճիռ:

հայցադիմումում որպես հիմք բերելով, ընդգծել է, որ այն որպես հոնտորական հարց է տրված... Իր հասցեին արված վիրավորանքի համար գյուղապետ Վ.Եղիազարյանը 1 միլիոն դրամ էր պահանջում իր գյուղի բնակչից, իսկ զրպարտության համար՝ 2 միլիոն դրամ, ինչպես նաև դատական ծախսերը: Դատավոր Վ. Հովնանյանը գյուղապետի ֆինանսական պահանջը բավարարեց մի փոքր մասով... Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատավոր Վարդուհի Հովնանյանն այս վերջին արտահայտությունը վիրավորանք է համարել՝ պատճառաբանելով, որ մարդու նկատմամբ «արածել» բառն օգտագործելի չէ»:

Պատասխանողն իր պատասխանում հայտնել է, որ հոդվածը մեկ այլ դատական գործընթացի մեկնաբանություն էր և դրա վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, որ հոդվածում նշված բոլոր վիճահարույց փաստական տվյալները և արտահայտությունները վերարտադրվել են այդ դատական վարույթի փաստերից և դատավարության ընթացքում հնչած հայտարարություններից՝ այդ թվում նաև՝ «արածել» բառը, որն այդ դատական գործով պատասխանող Գևորգ Մելքոնյանի խոսքից կատարված մեջբերում էր:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 29/05/2012թ.-ին կայացրած վճռով հայցը մերժել է ամբողջությամբ: Դատարանը որոշումը հիմնավորել է հետևյալ եզրահանգմամբ.

ա. «Գյուղապետի հասցեին արված «արածել» բառն արժե 1 միլիոն» վերնագիրը զրպարտություն չի համարվում, քանի որ նշված արտահայտության մեջ ներկայացված չեն հայցվորի անձի վերաբերյալ փաստացի տվյալներ, ներկայացվածն իր մեջ չի պարունակում կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն վերացական է,

բ. վերնագիրն իրականում չի արատավորում և չի էլ կարող արատավորել հայցվորի պատիվը, քանի որ վկայակոչված դատական գործի քննության շրջանակներում հայցվորը երկու անգամ ներկայացրել է գումարային փոխհատուցման պահանջ իր հասցեին կատարված արտահայտությունների, այդ թվում նաև վերնագրում տեղ գտած արտահայտության համար,

գ. լրագրողը, թեև որոշակի թերություններով, ընդամենը լուսաբանել է դատարանում քննված մեկ այլ գործ՝ այդ հարցի վերաբերյալ հանրությանը տրամադրելով տեղեկատվություն, որի հանգամանքը գտնվում է ազատ խոսքի պատշաճանության տակ:

Առաջին ատյանի դատարանի որոշումը չի բողոքարկվել և մտել է ուժի մեջ:

2. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Հոդվածն իր բնույթով հանդիսանում է լրատվամիջոցի կողմից դատական գործի լուսաբանում: Լրագրողները պետք է հնարավորություն ունենան ազատորեն և առանց պատասխանատվության ենթարկվելու վտանգի ներքո լուսաբանել և մեկնաբանել ընթացքի մեջ գտնվող դատական գործընթացներ՝ լինի դա քրեական, թե քաղաքացիական դատավարություն: Սա կարևոր հանգամանք է դատական համակարգի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության ապահովման տեսանկյունից, որը ժողովրդավարական ինքնակարգավորման կարևոր նախապայմաններից է: Հետևաբար, այս ոլորտում լրագրողական ազատության նկատմամբ սահմանափակումները պրակտիկայում պետք է զգուշորեն կիրառվեն, իսկ օրենսդրության մեջ՝ նեղ մեկնաբանվեն:

Տվյալ դեպքում լրագրողը լուսաբանել է ընթացքի մեջ գտնվող քաղաքացիական գործ՝ վերաբրտադրելով դատավարության կողմերի և դատավորի եզրահանգումները և հնչեցրած կարծիքները տվյալ գործի շրջանակներում: Լուսաբանելիս լրագրողը, շարունակ կատարելով մեջբերումներ և վկայակոչելով տեղեկատվության աղբյուրները, միջոցներ է ձեռնարկել, որպեսզի իրեն բավարար չափով տարանջատի տեղեկատվության հեղինակների արտահայտած կարծիքներից և փաստերի մասին հայտարարություններից: Նույնիսկ հոդվածի վերնագիրը, որը վեճի հիմնական առարկան է, հնարավոր չէ վերագրել լրագրողին, քանի որ դրանում օգտագործված վիրավորական բառը («արածել» բառը) և դրա վերաբերյալ հայցվորի դիրքորոշումը (որ դրա դիմաց պետք է տրամադրել դրամական փոխհատուցում) հնչել են այլ դատական գործով դատավարության կողմի հրապարակային ելույթների ժամանակ և գրավոր պնդումներում: Իսկ այն հանգամանքը, որ տվյալ դատաքննությունը դոնփակ չի եղել, արդեն իսկ խոսում է այն մասին, որ այդ դատաքննության ընթացքում հնչեցրած բոլոր հայտարարություններն եղել են հրապարակային: Այսպիսով, լրագրողն օգտվել է **Ֆիզիկական անձ** հանդիսացող տեղեկատվական աղբյուրի **հրապարակային ելույթներից**: Ըստ Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. նախադեպային որոշման, նման հանգամանքներում լրագրողը գտնվում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի պաշտպանության տակ (պատշաճ աղբյուրից ստացված տեղեկատվության բարեխիղճ վերաբրտադրում) և ազատվում է պատասխանատվությունից:²

Միննույն ժամանակ **Խորհուրդը նկատում է**, որ հոդվածի վերնագրում շարադրվածը միակ փաստական հանգամանքը չէր, որը վիճարկվում էր հայցվորի կողմից դատաքննության շրջանակներում և որը լուսաբանել էր լրագրողը: Հետևաբար, լրագրողն ունեցել է

² Տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումը Թաթուլ Մանասերյանի գործով, էջ 14:

ընտրության հնարավորություն և իր հայեցողությամբ վերնագրի համար ընտրել է այն փաստական տվյալը, որն անհրաժեշտ է համարել: Լայնորեն հայտնի է, որ տեղեկատվության մատուցման եղանակը որոշում է միմիայն լրագրողը:³ Այդուհանդերձ, նույնիսկ այդ դեպքում վերնագրի ընտրության նկատմամբ կան որոշակի պրոֆեսիոնալ պահանջներ. վերնագիրը պետք է գրավի ընթերցողի ուշադրությունը և միննույն ժամանակ հնարավորինս համարժեք արտահայտի լրատվական նյութի ողջ բովանդակությունը: Սա մի պահանջ է, որը կարգավորվում է ոչ թե իրավական մեխանիզմներով, այլ լրագրողական մասնագիտական նորմերով: Տվյալ դեպքում յուրաքանչյուր ողջամիտ օբյեկտիվ ընթերցողի մոտ հողվածի վերնագիրն ընթերցելիս կարող էր ստեղծվել թյուր պատկերացում, թե լուսաբանված դատաքննության շրջանակներում վեճի հիմնական առարկան հենց այն արտահայտությունն է, որը շարադրված էր վերնագրում, ինչպես նաև տպավորություն ստեղծվել լրագրողի կողմնակալ լինելու մասին:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

- Շուշան Դոյրոյան (Խորհրդի քարտուղար)** - Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ
Մանանա Ասլամազյան - «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն
Բորիս Նավասարդյան – Երևանի մամուլի ակումբի նախագահ
Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Արա Ղազարյան - «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

³ *Ձերսիլդն ընդդեմ Դանիայի*, թիվ 15890/89, ՄԻԵԴ 23/09/94 § 31.